

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԾՈՎ ԴԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003^{Թ.}
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան,
Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: ԳՐԿԿ՝ 100 1 հոս 0



ԸՆԴՈՒՆՈՒՄ
ՍԿԻՉՔ
ԱՐՂԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆ

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ԾՃՄ ԹՅԹՉ՝ ԹՅԹ, 13 ՅԹՃՄ Ե 2017Թ.
№ 11 (429)

Իմ ծառայությունն եմ առաջարկում ձեզ եւ յուրաքանչյուրիդ վստահությունն ու աջակցությունը հայցում

Խոսք էնսրոհին

Հարգելի ընտրող Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստվող ՀՀԴ-ն թիվ 12 ընտրատարածքում առաջադրել է իմ թեկնածությունը եւս, ինչի համար երախտապարտ եմ կուսակցությանը, որի որոշմանը տվել եմ համաձայնությունս:

Անչո՞ւ համաձայնվեցի, ի՞նչ մղումներ են ընկած պատասխանատու այդ քայլի հիմքում: Դրա համար, նախեւառաջ, թույլ տվեք ասել, ունեմ բարոյական լիարժեք ու չխաթարված հեղինակություն, հատկապես Կապանի տարածաշրջանում ունեմ ընտրողների աջակցությունը: Որպես հանրապետության հոգսերով մտահոգ անձնավորություն՝ նորություն ասած չեմ լինի, որ Ազգային ժողովի ընտրությունները բացառիկ են իրենց կարեւորությամբ եւ հետեւանքներով, քանզի նորընտիր խորհրդարանը բոլորովին այլ առաքելություն է ունենալու: Այլ կերպ՝ այս ընտրություններով է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագան: Ուստի եւ կխնդրեի ընտրողներին, որ, նախեւառաջ, ծանոթանային բոլոր քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերին, թեկնածուների անցած ճանապարհին ու նախապատվությունը տային այն ուժին կամ թեկնածուին, որի մեջ տեսնում են կարողություն ու վճռականություն՝ մեր երկրում ինչ-որ բան որակապես փոխելու: Եվ միայն դրանից հետո կատարեին գիտակցված ընտրություն, այլ ոչ թե առաջնորդվելին այսօրվան շահով, անձնական նկատառումներով, քանզի ընտրում ենք ոչ միայն մեր, այլեւ մեր զավակների ու թոռների ապագան:

Իմ թեկնածության օգտին արտահայտվել են (եւ շարունակում են արտահայտվել) մի քանի հասարակական կազմակերպություններ

նույնպես, մտավորականության ներկայացուցիչներ: Նրանք իրավացիորեն իրենց համոզմունքն են հայտնում, որ խորհրդարանական աշխատանքում կդրսեւորեն գիտելիքներս, տեղական ինքնակառավարման մարմիններում կուսակած փորձս, Սյունիքի մարզի եւ Կապանի տարածաշրջանի հիմնախնդիրների վերաբերյալ իմացությունս:

Լինելով ՀՀԴ անդամ ես, այնուամենայնիվ, կդրսեւորեմ նաեւ վերկուսակցական պահվածք, քանի որ մշտապես առաջնորդվում եմ պետության ընդհանրական շահով, լիազորությունների սահմանում կձգտեմ նեցուկ լինել յուրաքանչյուրին, հասանելի լինել ամենքին:

Սիրելի հայրենակից

Նշված հանգամանքները հաշվի առնելով է, որ կրկին ծառայությունն եմ առաջարկում ձեզ եւ յուրաքանչյուրիդ վստահությունն ու աջակցությունը հայցում:

Վստահեք, եւ կարդարացնեմ ձեր հույսերը: Հավատացեք, որ երկրի խորհրդարանում արժանապատվորեն կներկայացնեմ ձեր շահերը, ակտիվ մասնակցություն կունենամ խորհրդարանի եւ օրենսդրական գործունեությանը, եւ գործադիր իշխանության աշխատանքների վերահսկմանը, եւ մյուս գործառնությունների իրականացմանը: Իսկ վստահելու օրն ապրիլի 2-ն է:

Բարի ընտրություն բոլորին:

ԾՅՒ. ՅՄԱԻ՝ ԶՈՒ ԺՈՒ ԶՅՅՅ



ՖՈՒՏՈՒՐ

ՍՆՅՏԵՐՍ

Արտուր Աթայան. ծնվել է 1964թ. ապրիլի 6-ին Կապան քաղաքում: 1981թ. ավարտել է Կապանի N2 միջնակարգ դպրոցը: 1982-1984թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1984 թվականից աշխատանքի է անցել Կապանի «Էլեկտրոն» գործարանում: 1988 թվականից ակտիվորեն մասնակցել է ազգային զարթոնքին, հետագայում ներգրավվել ՀՀ սահմանների պաշտպանության կազմակերպման, ինքնապաշտպանական ջոկատների ձևավորման, սպառազինման ու հանդերձավորման գործին: 1991 թվականից ՀՀԴ անդամ է, նույն թվականից՝ ՀՀԴ ԿԿ գործիչն էր Սյունիքում, 1996 թվականից՝ ՀՀԴ «Լեռնահայաստան» մարզային կոմիտեի անդամ: 1995 թվականին քաղաքացիական նախաձեռնությամբ առաջադրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու: 2002 թվականին որպես գործարար հիմնել է «Վայել» ՍՊ ընկերությունը, որի տնօրենն էր մինչեւ 2008թ. նոյեմբեր ամիսը: 2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Կապանի քաղաքապետ. առաջադրվել էր քաղաքացիական նախաձեռնությամբ: 2012-16թթ. վերստին եղել է «Վայել» ՍՊ ընկերության

տնօրեն: Ակտիվորեն զբաղվել է հասարակական գործունեությամբ, բազմաթիվ բարեգործությունների հեղինակ է, մասնավորապես սոցիալական ու մշակութային ոլորտներում: «Սյունյաց տուն» ազգային-մշակութային ընկերության հիմնադիր անդամ է: ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամ է, եղել է պալատի Սյունիքի մասնաճյուղի խորհրդի նախագահ: Համագործակցել է միջազգային կազմակերպությունների հետ: 2002 թվականից նախաձեռնել ու նպաստել է «Կապան-Գլենդել քույր քաղաքների ընկերակցության» հիմնադրմանը: 2008թ. նոյեմբերի 11-ին ընտրվել է «Կապան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ: Ունի ֆինանսիստ-տնտեսագետի բարձրագույն կրթություն (2006թ. ավարտել է Երևանի կիրառական բիոտեխնոլոգիայի ինստիտուտի տնտեսագիտության ֆակուլտետը): Ամուսնացած է, ունի երկու որդի, մեկ դուստր, չորս թոռ:

Նարգազրույց օրվա թեմայով

ՖՈՏՈՍՆԻՐ



ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Երբեք չեմ կտրվել իմ ընտրողից, իմ ժողովրդից, անկախ այն բանից՝ ընտրապայքար կամ, թե՛ ոչ»

Նարգազրույց ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու Արտուր Աթայանի հետ

Ձ Ենթադրյալ կապանում, այլ նաև Այունիքի մարզում ճանաչված անուն է Արտուր Աթայանը:
2008թ. ընտրվել է Այունիքի մարզկենտրոնի քաղաքապետ՝ համոզիչ հաղթանակ տանելով 374 թեկնածուի համդեպ:
2012թ. ընտրողները չէին կասկածում, որ Արտուր Աթայանը կվերընտրվի Կապանի քաղաքապետի պաշտոնում, իշխանա-

կան ամենազոր թիմն անգամ անհավանական էր համարում նրա պարտությունը, սակայն ինչ-ինչ հանգամանքների թելադրությամբ վերջին պահին դուրս մղվեց ընտրապայքարից. ըստ էության նրան «հաղթելու» միակ ձեռքը հենց դա էր:
2016թ. հոկտեմբերի 2-ին Արտուր Աթայանը նորից ելավ ընտրապայքարի վերստին Կապանի քաղաքապետ ընտրվե-

լու համար: Նրա դեմ պայքարն այդ անգամ եւս աննախադեպ դրսեւորումներ ունեցավ՝ առավել անօրինական մեթոդների կիրառմամբ: Միայն քվեարկությանը նախորդած վերջին շաբաթում չորս անստորագիր հողված հրապարակվեց՝ նրան զրպարտելու եւ վարկաբեկելու ակնհայտ միտումով: Նույնատիպ միջոցների բովանդակությամբ տեսահոլովակներ տարածվեցին, որոնք ոչ միայն անստորագիր էին, այլև ներկայացվում էին ծպտյալ հեղինակների կողմից: Եվ այդքանից հետո մոտ 5700 ընտրող քվեարկեց Արտուր Աթայանի օգտին (քվեարկությանը մասնակցած 18 հազար ընտրողից): Այդքան փորձությունների միջով անցնելուց հետո էլ Արտուր Աթայանը մնաց սիրելի կապանցի հազարավոր ընտրողների համար:

Նա, անտարակույս, 337-ին եւ հատկապես կուսակցության սյունիքյան կառույցին պատիվ բերող անուն է, բայց Արտուր Աթայանին առավել բնորոշ է վերկուսակցական պահվածքը: Չենց որ համար էլ ընտրունելի կերպար է նաև մյուս քաղաքական ուժերի շատ ներկայացուցիչների, հանրության ամենատարբեր խավերի համար:

Նրան բնորոշ են մարդկային լավագույն հատկանիշները՝ ազնվությունն ու անկեղծությունը, բարի կամեցողությունը, ընկերասիրությունը, համեստությունը, մեղության մեջ հայտնվածին կարեկից լինելը: Ներողամիտ է ու անչար ժամանակ առ ժամանակ իր անվան շուրջ հյուսվող խարդավանքների ու մանր խաղերի դերակատարների նկատմամբ:

Հարուստ եւ գնահատելի փորձ ունի ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

Առանձնահատուկ վերաբերմունք ունի մեր երկրամասի հոգեւոր-մշակութային արժեքների, պատմության բոլոր ժամանակների նշանավոր սյունեցիների հանդեպ, որոնց փառքը ոգեկոչելու ուղղությամբ քայլեր է կատարում:

Քաջատեղյակ է Սյունիքի մարզի, նաև Կապանի տարածաշրջանի առջև ծառայած հիմնախնդիրներին:

Հավանաբար հենց այդ արժանիքներն է հաշվի առել 337-ն, որ Արտուր Աթայանին առաջադրել է Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու թիվ 12 ընտրատարածքում:

Անշուշտ, դա գործունեության կամ ինքնադրսեւորման նոր ոլորտ է Արտուր Աթայանի համար, ինչն էլ պատճառ եղավ, որ զրույցի հրավիրենք նրան՝ իմանալու պատգամավորի թեկնածուի պատկերացումները Հայաստանի Հանրապետության նորագվող խորհրդարանի ու Աժ պատգամավորի առաքելության մասին:

– **Պարոն Աթայան, ե՛լ 2012-ին, ե՛լ 2016-ին ընտրական բազում փորձությունների միջով անցաք, բազում խարավանքներ ու բանասարկություններ հյուսվեցին Ձեր անվան շուրջ, բայց Դուք ոչ միայն չեք ընկճվում ու նահան-**

ջում, այլև նորից ընտրություններին մասնակցելու հայտ եք ներկայացրել, այն էլ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին:

Ինչպես հասկանալ, մի՞թե լավատեսությունն ու հավատն են Ձեզ մղում մնան քայլերի, թե՞ Ձեզ հավատացող եւ հետևող ընտրողների հորդորով եք առաջնորդվում:

– Կփորձեմ անկեղծ պատասխանել. շատ են կարելուրում գալիք Ազգային ժողովի ընտրությունները, որովհետև իր նշանակությամբ եւ կարելուրությամբ նախադեպը չունի: Քանզի ընտրում ենք մի խորհրդարան, որ պետության զարգացման հիմքն է լինելու:

Մայիսի 21-ին լրանում է 25 տարին, ինչ անդամագրվել են Հայ հեղափոխական դաշնակցությանը: Դա մեծ ժամանակահատված է, իմ ապրած կյանքի մի զգալի հատվածը, ուստի եւ ուզում եմ օգնել կուսակցությանը. բնավ նշանակություն չունի՝ կմտնե՞մ խորհրդարան, թե՞ ոչ: Ուզում եմ օգնել իմ կուսակցությանը, բանզի հավատում եմ նրա բռնած ուղուն եւ ամեն ինչ անելու եմ, որ ուժերիս ներածին չափով ներդրում ունենամ կուսակցության նախընտրական գործերում:

– **Ինչպե՞ս եք բացատրում իրողությունը, որ ե՛լ 2012-ի ընտրություններից հետո, ե՛լ անցյալ տարվա հոկտեմբերի 2-ի ընտրություններից հետո շարունակում եք հարգանք վայելել Կապանի ընտրողների շրջանում:**

– Երբեք չեմ կտրվել իմ ընտրողներից, իմ ժողովրդից, անկախ այն բանից՝ ընտրապայքար կա՞, թե՞ ոչ: Ուրիշների մնան նրանց չեմ հիշում այն ժամանակ, երբ ընտրությունները մոտենում են: Եվ անցած տարիների ընթացքում միշտ փորձել եմ լինել նրանց կողքին, ինչ-որ ձեռով ձգտել օժանդակել, մեցուկ լինել: Նրանց մոտ չեմ գնացել ընտրությունից ընտրություն, նրանցից մեկն եմ եղել ու կամ:

– **Դուք իրոք հարուստ գիտելիքներ եւ փորձ ունեք տեղական ինքնակառավարման, ինչպես եւ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում, բայց խորհրդարանային աշխատանքում... ԱՆկեղծ լինե՞ք, պատրաստ ե՞ք արժանապատվորեն կրելու Ազգային ժողովի պատգամավորի մանդատը, եթե ընտրող վստահի:**

– Ճիշտ է, մնան փորձ չունեն, բայց ովքեր առաջին անգամ են ընտրվում, բնական է՝ մնան փորձ չեն ունենում, այդ ճանապարհին աստիճանաբար անցնում են: Մի բան կարող եմ ստույգ ասել՝ պատգամավորի մանդատը ստանալու դեպքում ընտրող չի ամաչելու իմ օգտին քվեարկելու համար: Հնարավորությունների սահմաններում առավելագույն անելու եմ, որ պիտանի լինեմ իմ ժողովրդին, Ազգային ժողովին, Սյունիքի մարզին, Կապանի տարածաշրջանին:

– **Հետաքրքիր է, ինքնե՞րդ կամեցաք առաջադրվել պատգամավորի թեկնածու, թե՞ 337 ղեկավար մարմինն առաջադրեց:**

– Ճշմարիտն ասած՝ հոկտեմբերին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո հոգեպես պատրաստ չէի նոր ընտրությունների, առաջարկը եղավ 337 գերագույն մարմնի կողմից: Ասեմ, որ դա ինձ համար մեծ պատիվ է: Ու թեև ինքս չեմ նախածեռնել, բայց հաճույքով կուսակցության առաջարկությունն ընդունել եմ:

– **337-ն Կապանի տարածաշրջանում ավանդաբար լուրջ ազդեցություն է ունեցել եւ կայուն ընտրազանգված, բայց հանրության մեջ մի կարծիք կա, որ քաղաքական այդ ուժն աստիճանաբար կորցնում է իր ազդեցությունը նաև Կապանի տարածաշրջանում:**

Արդյո՞ք ճիշտ է այդ տեսակետը, կկարողանա՞ք գոնե Աժ նախորդ ընտրություններում նվաճած բնագծերը պահպանել:

– Թույլ տվեք ասել, որ դա թյուր կարծիք է: 1990-ականների սկզբից մինչեւ հիմա՝ մոտ 25 տարի, անշուշտ, տատանումներ եղել են, բայց ոչ շատ: Դաշնակցությունը կոնկրետ մեր քաղաքում, Կապանի շրջանում միշտ ունեցել է կայուն ընտրազանգված եւ ընտրությունների ժամանակ միշտ եղել է շատ լուրջ մրցակից յուրաքանչյուր քաղաքական ուժի համար: Այժմ



ՖՈՏՈՍՆԻՐ

ԱՅՈՒՆՅԱՅ ԵՐԿՐԻ



ՖՈՏՈՒՄՈՐ

Նարագաս եզերք

Նարագարույց օրվա թեմայով

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ. «Երբեք չեմ կտրվել իմ ընտրողից, իմ ժողովրդից, անկախ այն բանից՝ ընտրապայքար կամ, թե՛ ոչ»

Հարցազրույց ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու Արտուր Աթայանի հետ

3 ու աղավաղված մեծամասնական ընտրակարգն է: Ուրեմն փոխվում են ընտրության ամբողջ փիլիսոփայությունը, տրամաբանությունը: Ընտրողների մեծ մասն ընտրելու է անձին՝ առանց կարողալու կուսակցության ծրագիրը, առանց ուսումնասիրելու՝ ինչ թիմով են հանդես գալիս, ինչ անցյալ ունի տվյալ թեկնածուն: Վատն այն է, որ գաղափարական-քաղաքական պայքարը մղվում է երկրորդ պլան:

– **Հայաստանը հզոր է ուժեղ մարզերով, Սյունիքում ի՞նչ գլոբալ խնդիրներ կան, որոնք համապետական ուշադրության կարիք ունեն:**

– Հանդգրված եմ, որ Հայաստանի բոլոր մարզերում եւ պրոբլեմները, եւ հիմնախնդիրները գրեթե նույնն են, պատգամավորները պիտի կարողանան դրանց առաջնահերթությունները ճիշտ տեղա-

բաշխել, այնպիսի պայմաններ պիտի ստեղծեն, որ կառավարությունը կարողանա ճիշտ աշխատել. պարզաբանեմ միտքս՝ երբեմն այնպիսի ծրագրեր են իրականացվում, որ կողքից նայում ու համոզվում ես, որ կարելի էր եւ այս փուլում չիրագործել դրանք, քանզի դրանից առաջ ավելի կարելու էր կային, որոնց նախելառաջ լուծում պիտի տրվեր: Ստանում ես՝ այս ծրագրի փոխարեն այս մեկը պիտի արվեր, որ աշխատատեղեր ստեղծվեին եւ այլն: Այդ հարցերն ինչ-որ չափով պետք է ուղղորդվեն պատգամավորների կողմից:

– **Ընտրապայքարն էլ այլ դրսևորումներ պիտի ունենա, բայց տեսնում եմք՝ նախկին մեթոդներից չենք հրաժարվել, պատգամավորի թեկնածուն պայքարը չի տանում գաղափարական-քաղաքական հողի**

վրա, այլ փորձում է գործնական հարցեր լուծել՝ այս փողոցն ասֆալտապատել, մյուս փողոցը լուսավորել, այս տանիքը նորոգել... Դրանք հարցեր են, որ շատ հեռու են պատգամավորի լիազորություններից: Հիմա Դուք, Ձեր թիմակիցները թիվ 12 ընտրատարածքում պայքարի ո՞ր ձևն եք նախընտրում, որի՞նք եք նախապատվություն տալիս:

– Նախընտրական շրջանում գործնական հարցեր լուծելն ամեն դեպքում կաշառք տալու «քաղաքակիրթ» ձեւ է, գնում են գյուղեր, քաղաքներ՝ խոստումներ տալիս, թե այս ճանապարհը կասֆալտապատենք, այս տանիքը կնորոգենք, ջրագիծը կփոխենք, բնակարանը կգազֆիկացնենք... Ամբողջ այդ պրոցեսն անբարոյական է, որովհետեւ դա նույնն է, եթե քո ընտրազանգվածին (ներող եղեք նման արտահայտության համար) թեթևաբարո կնոջ տեղ դնես, դրանով դու մոլորեցնում ես, շեղում ես մարդկանց եւ տանում դեպի մի այլ ուղղությամբ: Սա իսկն իմ ասած բառն է: Այդ գործերը երեկ անելի, եթե իսկապես մտահոգված ես դրանցով եւ ոչ թե այս վերջին ամսին: Նույն գործելակերպը 2016-ի հոկտեմբերին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ էլ տեսանք: Հիմա էլ ընտրողն օրենսդիր մարմնի անդամ է ընտրում եւ ոչ թե գործադիր իշխանության ներկայացուցիչ: Ընտրողը պիտի իմանա, որ իր ապագան է ընտրում: Գիշտ է, այսօր շատ մարդկանց հետ եմ շփվում, որոնք կարելու են կաշառքի գործոնը ու չեն էլ թաքցնում դրա կարելուությունը: Ասում են՝ եթե 30 կամ 40 հազար դրամ տան իմ ընտանիքին, դա ինձ համար մեծ, շոշափելի գումար է, դրանով կարող եմ կոմունալ վարձերը վճարել, որեւէ կենցաղային հարց լուծել. այնպես որ, այս ընտրություններում նույնպես ընտրակաշառքն իր ազդեցությունն ունենալու է: Պարզապես պետք է մարդկանց հորդորել՝ ընտրեք նրան, ով կարող է զբաղվել օրենսդիր գործունեությամբ, իսկ ընտրակաշառքը տվյալ թեկնածուի անվաստակ գումարների մի չնչին մասն է...

– **Բայց այս անգամ, կարծեք, ճիշտ ընտրելու հնարավորություն է ընձեռված:**

– Այս անգամ ամեն ինչ արվում է, որ

ընտրատեղամասում կեղծիքներ չլինեն: Բայց ոչինչ չի արվել, որ տեղամասից դուրս էլ օրինականություն լինի: Էլի մարդկանց մեջ կան աշխատանքը կորցնելու վախը, ընտրակաշառքի սպասումը, որեւէ մեկին սիրաշահելը: Ցավոք սրտի, այդ ամենը մնացել է...

– **Արդեն իսկ հանրապետությունում խոսակցություններ կան վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Չե՞ք կարծում, որ այդ գործելակերպը, ինչպես նախկինում, վճռորոշ դեր է խաղալու:**

– Վարչական ապարատում աշխատողների շրջանում երկյուղ կա, աշխատանքը կորցնելու մտավախություն, մասնավոր գրույցների ժամանակ դա խոստովանում են. «Մենք այսօր աշխատանք ունենք, եւ չենք ուզում խնդիրներ ունենալ»: Բայց ինչքան էլ ճնշումներ լինեն, ըստ իս՝ վարչական աշխատողների մի մասը խղճի մտոք քվեախցիկում իր կամքն է արտահայտելու: Վարչական լծակն օգտագործելը մեր օրերում, թույլ տվեք ասել, անգոր եւ անարժան թեկնածուի փրկության միակ ճանապարհն է:

– **Ուզում եմք Ձեզ մի հարց ուղղել՝ ընտրություններին ոչ այնքան առնչվող՝ Ըստ Ձեզ՝ որո՞նք են մեր երկրի առջեւ կանգնած մարտահրավերները, որ ապագա խորհրդարանը պետք է ուշադրության կենտրոնում պահի:**

– Առաջինը, ինչը կարելու է եւ կենսական նշանակություն ունի Հայաստանի համար, Ղարաբաղյան հանգույցի լուծումն է՝ առանց նախապայմանների: Այդ հարցում մենք ոչ մի նահանջ չպիտի ունենանք, եթե նույնիսկ լարվածությունը շարունակվի: Երկրորդ՝ ամեն ինչ պիտի անենք, որ խնդիրը լուծվի խաղաղ, բանակցային ճանապարհով: Յուրաքանչյուր բախում ցավագին է անդրադառնալու մեր տնտեսության վրա: Դրա հետ մեկտեղ՝ բանակի հզորացում: Խաղաղության երաշխիքը կարող է լինել հզոր բանակը: Խաղաղություն ես ուզում ուժեղացրու բանակը, որ խաղաղությունը էլ կարողանաս ապահովել:

Երրորդ՝ արժանապատիվ ապրելակերպի ապահովում, տնտեսության ճիշտ կառավարում, այնպիսի պայմանների ստեղծում, որ կանխվի արտագաղթը, որ աշխատող մարդն իր վաստակի տերը դառնա, որ կարողանա իր ընտանիքի ապրուստը հոգալ, որ հայ մարդն ինքնադրսեւորվելու հնարավորություն ունենա: Այլապես հետեւանքները դժվար չէ պատկերացնել...

– **Պարոն Աթայան, օրենքներ են ընդունվում խորհրդարանում, բայց դրանք կյանքում չեն իրագործվում լիարժեք: Ըստ Ձեզ՝ ո՞րն է դրա պատճառը:**

– Չեմ կարծում, որ խորհրդարանը վատ օրենքներ է ընդունում: Խնդիրն այն է, որ այդ օրենքները բոլորի համար պիտի գործեն: Այնպիսի պետություն պիտի ստեղծենք, որտեղ օրենքի գերակայություն լինի, բոլորը հավասար լինեն օրենքի առաջ: Այդ դեպքում խնդիր չենք ունենա:

– **Ձեր կարծիքով, ի՞նչն է պակասում մեր խորհրդարանին՝ ինտելեկտը, փորձի պակասը, օրենսդրական աշխատանքի արդյունավետությունը, թե՞...**

– Կոնկրետ այս վերջին հինգ տարվա խորհրդարանում՝ 131 պատգամավորից տասը՝ տասնհինգին կարող են առանձնացնել, որ իսկապես աշխատում էին, մասնակցում օրենսդրական գործունեությանը, ընտրողների շահերը պաշտպանում: Մեր խորհրդարանին անհրաժեշտ են արհեստավարժ պատգամավորներ, ովքեր եւ օրենսդրական աշխատանքով կզբաղվեն, եւ կվերահսկեն կառավարության գործունեությունը, եւ ընտրողների մտահոգություններին ինչ-որ չափով տեղ կկանգնեն: Աշխատանքն է պակասում մեր խորհրդարանին, զուտ պրոֆեսիոնալ աշխատանքը:

ՅԻՃՅՈՒՆ ԵՆ ԶԵՐ ԾԾԵՍՍՆՆԱԿ ԾԾԻ ԵՆ ԶԵՐ ԾԾԵՍՍՆԱԿ